Հովհաննես Իգիթյան

Ծնվել է 1960թ. ապրիլի 14-ին, Հադրութ, ԼՂԻՄ (ԽՍՀՄ):

Կրթություն՝

1977-1982թթ.	Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի (ՀՊՃՀ) ռադիոէլեկտրոնիկայի ֆակուլտետ,
1980-1981թթ.	ՀՊՃՀ Սոցիալական հետազոտությունների դպրոցի գիտական թարգմանության դասընթացներ (անգլերեն),
1990թ.	«Ազատ շուկայական հարաբերություններ», «Պետական-մասնավոր համագործակցության կարգավորում», «Արհմիությունների դերը Ֆրանսիայում» քաղաքագիտության և տնտեսագիտության դասընթացներ (Սորբոնի համալսարան, Փարիզ),
1992-1993թթ.	«Դիվանագիտական և հյուպատոսական ծառայություն», «Դիվանագիտական արարողակարգ» ՌԴ ԱԳՆ դիվանագիտական ակադեմիայի դասընթաց,
2004-2006թթ.	Ֆրանսիայի ֆինանսների նախարարության և Ֆրանսիայի հարկային ծառայության համատեղ կազմակերպած դասընթացներ, Փարիզ:

Աշխատանքային գործունեություն՝

1981-1984թթ.	Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի գիտահետազոտական աշխատանքների բաժնի լաբորանտ, ճարտարագետ, կրտսեր գիտաշխատող,
1984-1988թթ.	ԵրՊԻ գիտահետազոտական աշխատանքների բաժնի «Էլեկտրական մեքենաների դիագնոստիկայի» գիտահետազոտական լաբորատորիայի վարիչ, ավագ գիտաշխատող,
1988-1990թթ.	ԵրՊԻ «Վերգետնյա արագընթաց տրանսպորտ» գիտահետազոտական լաբորատորիայի ավագ գիտաշխատող,
1990-1995թթ.	ՀՀ Գերագույն խորհրդի պատգամավոր, ԳԽ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի անդամ, ԱՊՀ

	խորհրդարանական վեհաժողովի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի փոխնախագահ,
1995-1999թթ.	ՀՀ ԱԺ պատգամավոր, ԱԺ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ, ԵԽԽՎ-ում ՀՀ ԱԺ պատվիրակության ղեկավար, ԵԱՀԿ ԽՎ ՀՀ ԱԺ պատվիրակության ղեկավար, «Հանրապետություն» խմբակցության անդամ,
1999-2002թթ.	Երևանի «Կենտրոն» համայնքի թաղապետարանի իրավախորհրդատու,
2003-2018թթ.	Հայաստանում ԵՄ առևտրի պալատի գործադիր տնօրեն,
2003-2008թթ.	ԵՄ «ՏԱՍԻՍ» ծրագրի մի շարք նախագծերի փորձագետ,
2004-2005թթ.	«Ֆրանս-հայկական զարգացման» հիմնադրամի գործադիր տնօրեն,
2006-2012թթ.	«107 Պրոմենադ» անշարժ գույքի գործակալության միջազգային նախագծերի մենեջեր, (Ֆրանսիա),
2007-2011թթ.	«Եվրոպոլիս» ՍՊԸ միջազգային նախագծերի մենեջեր (Ղազախստան),
2012-2017թթ.	«Վինսի Գրուպ»-ի խորհրդական (Ֆրանսիա),
2014-2015թթ.	«ՖԻԱԲՍԻ» (Համաշխարհային անշարժ գույքի ֆեդերացիա), նախագահի խորհրդական (Ֆրանսիա),
2015-2016թթ.	«ՀԱՐՔՈ Գրուպ»-ի ներկայացուցիչ (Բելգիա),
2019-2021թթ.	ՀՀ ԱԺ պատգամավոր, ԱԺ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ:

2022թ. փետրվարի 22-ին ՀՀ նախագահի հրամանագրով նշանակվել է Լիտվայի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան (նստավայրը՝ Վիլնյուս):

Օտար լեզուների իմացություն՝
հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն:

Ընտանեկան կարգավիճակ՝
ամուսնացած է, ունի երեք զավակ: